ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/69-Պ

ք.Երևան «04» նոյեմբերի 2022թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն, ի դեմս գործադիր տնօրեն Հովհաննես Մովսիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից,

և

«Եվրո Ստուդիո» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռաֆայել Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է մատուցել սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ում նշված տպագրման և գովազդի տեղաբաշխման ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար:

1.2. Կատարողի կողմից մատուցվող ծառայությունների բնութագիրը, ծավալը, գինը, կատարման ժամկետները և այլ պայմանները սահմանվում են Հավելված 1-ով, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:

1.3 Ծառայությունները պատշաճ մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցիչների կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով. տեղաբաշխել, ապամոնտաժել (առանց հավելյալ վճարի) և սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել գովազդի անխափան տարածումը, գովազդային վահանակների մաքրությունը էլեկտրասնուցումը, ըստ անհրաժեշտության՝ լուսավորությունը և Ծառայությունների պատշաճ մատուցման համար պահանջվող այլ տեխնիկական սպասարկումը:

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանագրի Հավելվածով 1-ով սահմանված ամբողջ ժամանակահատվածում,

2.1.3. Պատվիրատուի պահանջով ողջամիտ ժամկետում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.4. անձամբ կատարել Ծառայությունները կամ ներգրավել այլ մասնագետների միայն Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնությամբ,

2.1.5. Պատվիրատուի պահանջով վերջինիս հաղորդել կատարված ծառայությունների մասին բոլոր տեղեկությունները:

2.1.6 Գովազդային պաստառը վնասվելու դեպքում անհապաղ իր հաշվին վերանորոգել և վերականգնել նախնական տեսքը:

2.1.7. Ծառայությունները ոչ պատշաճ մատուցելու դեպքում լրացնել չմատուցված Ծառայությունների ժամանակահատվածը՝ Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցնելով դրա կարգը:

2.1.8. Անհապաղ վերացնել Պատվիրատուի կողմից ծառայություններում հայտնաբերված թերությունները:
2.1.9. Առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության, չկատարել վերջինիս կողմից տրամադրված՝ տեղաբաշխման ենթակա գովազդի բովանդակությունից շեղում:
2.1.10. Պայմանագիրը կնքելուց հետո 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև Պայմանագրի գործողության ողջ ընթացքում՝ ըստ Պատվիրատուի պահանջի ներկայացնել վերջինիս ՀՀ, քաղաք Երևանում (անհրաժեշտության պարագայում նաև ՀՀ մարզերում) արտաքին գովազդի բիլբորդերների կամ այլ արտաքին գովազդի տեղադրման վայրերի վերաբերյալ Կատարողի ունեցած թույլտվությունները:
2.2. *Կատարողն իրավունք ունի՝*
2.2.1. պահանջելու ցանկացած տեղեկություն՝ կապված սույն պայմանագրի կատարման հետ.
2.2.2. սույն պայմանագրում սահմանված ծառայությունների պատշաճ մատուցման համար, անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի գրավոր համաձայնությամբ, ներգրավել այլ անձանց (մասնագետների),
2.2.3. դադարեցնել սույն պայմանագիրը՝ համաձայն 6.4. կետի,
2.2.4. պահանջել Պատվիրատուից վճարելու պատշաճ մատուցված և ընդունված ծառայությունների համար
2.3. *Պատվիրատուն իրավունք ունի՝*
2.3.1. ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը, ինչպես նաև սույն Պայմանագրով իր ակնկալած արդյունքին հասնելու նպատակով Կատարողին տալ Ծառայությունների մատուցմանը վերաբերելի ողջամիտ ցուցումներ,
2.3.2. մինչև հանձնման-ընդունման ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով փաստացի պատշաճ մատուցված ծառայությունների դիմաց:
2.3.3. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունները Կատարողի կողմից չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում՝ պահանջել վճարել տույժ՝ յուրաքանչյուր չկատարված օրվա համար՝ չմատուցված ծառայությունների արժեքի 0.1%-ի չափով, բայց ոչ ավել քան չմատուցված ծառայությունների արժեքի 10 տոկոսը:
2.3.4. Ծառայություններում թերություններ հայտնաբերելու դեպքում առաջարկել Կատարողին անհապաղ վերացնել մատնանշված թերությունները:
2.3.5. Ցանկացած պահի միակողմանիորեն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախօրոք 7 (յոթ) օր առաջ տեղեկացնելով Կատարողին:
2.3.6.
2.3.6.1. թույլ է տվել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտականությունների խախտում, և իր կողմից թույլ տված խախտումը վերացնելու մասին ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացրել այն:
2.3.6.2. Պայմանագրով սահմանված ժամկետներում չի մատուցել Ծառայությունները կամ դրանց մի մասը,
2.3.6.3. այլ կերպ թույլ է տվել սույն Պայմանագրի էական խախտում:
2.4. *Պատվիրատուն պարտավոր է՝*
2.4.1. ընդունել պատշաճ մատուցված ծառայությունները և դրանց դիմաց Կատարողին վճարել սույն պայմանագրի Հավելվածով սահմանված գնին և ժամկետին համապատասխան:

3. Ծառայությունների արժեքը և հանձնման-ընդունման կարգը

3.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 351 000 (երեք հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ, ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները, որից՝

3.1.1. 108 000 (մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամը կազմում է գովազդային պաստառների տպագրության ծառայությունների արժեքը,

3.1.2. 243 000 (երկու հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամը՝ գովազդի տեղադրման/տեղաբաշխման ծառայության արժեքը:

3.2. Պատվիրատուն սույն պայմանագրի 3.1. կետով նախատեսված գումարը վճարում է հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի երկկողմանի հաստատվելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3. Պատվիրատուն Ծառայությունների դիմաց վճարում է անկանխիկ եղանակով: Ծառայությունների դիմաց վճարելու Պատվիրատուի պարտավորությունը համարվում է կատարված դրամական միջոցները Պատվիրատուի բանկային հաշվից ելքագրման պահին:

3.4. Բանկային ծախսերը Պատվիրատուի բանկում կրում է Պատվիրատուն, իսկ Կատարողի բանկում՝ Կատարողը:

3.5. Ծառայությունների մատուցման ավարտից հետո Կատարողը պարտավորվում է 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը:

3.6. Հանձնման-ընդունման ակտը ներկայացնելու օրվանից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն Կատարողի աջակցությամբ ստուգում է մատուցված Ծառայությունների որակը և ծավալը, և առարկությունների բացակայության դեպքում հաստատում հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը: Ընդ որում, սույն Պայմանագրի շրջանակներում հանձնման-ընդունման ակտի և հաշիվ-վավերագրի հաստատման օր է համարվում դրանց վրա Կողմերից վերջինի ստորագրության (կնիքի առկայության դեպքում նաև կնքման) օրը:

3.7. Այն դեպքում, երբ մատուցված Ծառայություններում հայտնաբերվում են թերություններ, Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման ակտը և սույն Պայմանագրի 3.6. կետում նշված ժամկետում Կատարողին գրավոր ներկայացնում է հանձնման-ընդունման ակտը չհաստատելու հիմնավորում՝ նշելով մատուցված Ծառայություններում հայտնաբերված թերությունները և սահմանելով դրանց վերացման ողջամիտ ժամկետ կամ սույն Պայմանագրի 2.3.6 կետով սահմանված կարգով միակողմանի լուծում է Պայմանագիրը:

3.8. Հանձնման-ընդունման ակտը և հաշիվ-վավերագիրը Պատվիրատուի կողմից ստանալու պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս կողմից չհաստատվելու և թերությունները հիմնավորող գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում դրանք համարվում են հաստատված ներկայացման օրը:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1 Պատվիրատուն պատասխանատվություն է կրում սույն պայմանագրի Հավելված 1-ով սահմանված վճարումների ժամկետները խախտելու համար՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ըստ Կատարողի պահանջի վճարելով Ծառայությունների արժեքի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

4.2 Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում ծառայությունների մատուցման ընթացքում Կատարողի գործողությունների ու մեթոդների համար:

4.3 Կատարողը պատասխանատվություն է կրում իր կողմից մատուցվող ծառայությունների տեխնիկական թերությունների համար, և այդ պատճառով պատճառով այլ անձանց պատճառված (նյութական և/կամ ոչ նյութական) վնասների համար:
4.4. Սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունների մատուցման ժամկետի խախտման դեպքում Կատարողը Պատվիրատուի պահանջի դեպքում վճարում է տույժ, յուրաքանչյուր ուշացման օրվա համար Ծառայությունների մատուցման ընդհանուր արժեքի 0.13 (զրո ամբողջ տասներեք) տոկոսի չափով:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-մաժոր)

5.1. Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:
5.2. Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 10 օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Վեճերի լուծման կարգը

6.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Եզրափակիչ դրույթներ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են համարվում պայմանագրի առարկայի վերաբերյալ կողմերի միջև նախկինում եղած բանավոր կամ գրավոր պայմանավորվածությունները:
7.2. Սույն պայմանագրի դրույթները մեկնաբանելիս կողմերը, ինչպես նաև դատարանը պետք է ելնեն դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Այդպիսիք պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է սույն պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:
7.3. Սույն պայմանագրի առանձին դրույթի կամ մասի անվավերությունը չի հանգեցնում դրա մյուս դրույթների կամ մասերի անվավերությանը:
7.4. Կողմերից յուրաքանչյուրը, հիմնավորված պատճառաբանությամբ, իրավունք ունի վաղաժամկետ միակողմանիորեն դադարեցնել սույն պայմանագիրը՝ 3(երեք) օր առաջ այդ մասին գրավոր (նամակ, ֆաքս, էլ. փոստ) ծանուցելով մյուս կողմին: Պայմանագիրը վաղաժամկետ դադարեցնելու դեպքում կատարվում են փոխադարձ հաշվարկների ճշգրտում, ինչպես նաև մյուս կողմին պատճառված տույժերի վճարում:
7.5. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները ուժի մեջ են մտնում միայն կողմերի ներկայացուցիչների կողմից ստորագրելու ու կնքելու պահից և հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.6. Կատարողը երաշխավորում և հավաստիացնում է, որ տիրապետում է և ունի սույն Պայմանագրով նախատեսված Ծառայությունները պատշաճ մատուցելու համար ՀՀ օրենսդրությամբ պահանջվող բոլոր թույլտվությունները:

7.7. Պայմանագրի Հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասերը:

7.8. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի անցկացման կապակցությամբ կարող են սահմանվել լրացուցիչ պարտավորություններ մրցույթի անցկացման հետ կապված՝ Կատարողը պարտավորվում է առանց լրացուցիչ համաձայնություն տրամադրելու այդ բոլոր պարտավորությունները ստանձնել այն նույն ծավալով, որ ծավալով կսահմանվեն Պատվիրատուի համար, պայմանով, որ դրանք լինեն ողջամիտ, չառաջացնեն լրացուցիչ ֆինանսական ծախսեր Կատարողի համար և վերաբերեն սույն Պայմանագրով Կատարողի ստանձնած պարտավորություններին: Լրացուցիչ պարտավորությունների մասին Պատվիրատուն պարտավորվում է Կատարողին ծանուցել անհապաղ, որոնք ուժի մեջ են մտնում Կատարողի համար դրանց մասին ծանուցվելու պահից, եթե այլ բան չի բխում տվյալ ծանուցումներից:

7.9.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների պատշաճ և ամբողջական կատարումը:

7.10. Այն պայմանները, որոնք ներառված չեն սույն պայմանագրում, կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ:

7.11. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 օրինակից, որոնք ունեն միևնույն իրավաբանական ուժը: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ:

8. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ	«Եվրո Ստուդիո» ՍՊԸ
ՀՎՀՀ՝ 01540062	ՀՎՀՀ 06937251
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26	ՀՀ, Լոռու մարզ, ք Վանաձոր, Թատերական 6
«Ինեկոբանկ» ՓԲԸ	«Ակբա բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001	Հ/Հ՝ 220053334144000
Գործադիր տնօրեն՝	Տնօրեն՝
_____ Հ. Մովսիսյան	_____ Ռ. Գալստյան

Հավելված 1
«04» նոյեմբերի 2022թ. կնքված № ՀՀՀ-ՄԱԾՁԲ-22/69-Պ
Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրի

Ծառայությունների նկարագիրը	1. Թվով 3 հատ գովազդային վահանակների տեղադրում քաղաք Վանաձորում 2. Թվով 3 հատ գովազդային վահանակների տպագրություն. 1քմ – 2000 դ., չափսերը – 3հատ x 18քմ, ընդամենը – 54քմ
Ծառայությունների մատուցման հասցեներ	ք. Վանաձոր, Գր. Լուսավորչի 49 Ա կողմ ք. Վանաձոր, Տ. Մեծի 46 Ա կողմ ք. Վանաձոր, Տ. Մեծի 38 Բ կողմ
Ծառայությունների մատուցման ժամանակահատվածը	11.11.2022թ.-11.12.2022թ.
Ծառայությունների արժեքը	1. Գովազդային պաստառների տեղաբաշխման/տեղադրման ծառայության արժեքը կազմում է 243,000 (երկու հարյուր քառասուներեք հազար) ՀՀ դրամ ներառյալ հարկերը: 2. Պաստառների տպագրության արժեքը կազմում է 108,000 (մեկ հարյուր ութ հազար) ՀՀ դրամ ներառյալ հարկերը:
Ծառայությունների դիմաց վճարման ժամկետը և եղանակը (կանխիկ կամ անկանխիկ)	Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 351,000 (երեք հարյուր հիսունմեկ հազար) ՀՀ դրամ ներառյալ հարկերը,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

ՀՎՀՀ՝ 01540062
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26

«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2050022082671001
Գործադիր տնօրեն՝

_____ Հ. Մովսիսյան

ԿԱՏԱՐՈՂ
«Եվրո Ստուդիո» ՍՊԸ

ՀՎՀՀ 06937251
ՀՀ, Լոռու մարզ, ք Վանաձոր,
Թատերական 6
«Ակբա բանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 22005334144000
Տնօրեն՝

_____ Ռ. Գալստյան

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ԱԳ 84

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ

Տրված՝ «11» 7 2022թ.

Թույլատրված գործունեության անվանումը *արտաքին գովազդ*

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանում կամ անհատ ձեռնարկատիրոջ անուն, ազգանուն կազմակերպաիրավական ձև

« ԵՎՐՈ ՍՏՈՒԴԻՈ » ՍՊԸ

ք. Վանաձոր, Թատերական փող. թիվ 6

գտնվելու վայրը

ՀՎՀՀ՝ 06937251

ք.Վանաձոր համայնքի տարածք

գովազդի տեղադրման վայրը/վայրերը

180 /քմ//այլ/, 100/քմ/(դատարկ գով.վահ.)

չափերը /քմ/

Թույլտվության գործողության ժամկետը՝ *2022թ. հուլիսի 1-ից*
մինչև *2022թ. դեկտեմբերի 31-ը:*

Վանաձոր համայնքի
ղեկավարի պաշտոնակատար [signature] Արկադի Փելեշյան

(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Կ. Տ.